ԱՄՆ ՄԱՍԱՉՈՒՍԵՏՍ ՆԱՀԱՆԳԻ ՇԵՐԻՖԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵԼ Է ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ

18.09.2014 13:53

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատում այսօր՝ սեպտեմբերի 18-ին, հյուրընկալվել է ԱՄՆ Մասաչուսետս նահանգի Միդլսեքս շրջանի շերիֆ Փիթր Քութուջյանը: Պալատի նախագահ Արա Զոհրաբյանի, Պալատի նախագահի առաջին տեղակալ Արթուր Հովհաննիսյանի և Փաստաբանական դպրոցի տնօրեն Սիմոն Բաբայանի ուղեկցությամբ Փիթը Քութուջյանը շրջայց է կատարել Հայաստանի փաստաբանների պալատի շենքով, ծանոթացել պայմաններին:

ԱՄՆ-ից ժամանած հյուրը հանդիպում է ունեցել հայ փաստաբանների հետ, ներկայացրել այն գործառույթները, որոնք իրականացնում է իր աշխատանքի շրջանակներում:

Փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը ողջունել է շերիֆ Քութուջյանի այցը Հայաստան և Փաստաբանների պալատ:

Փիթը Քութուջյանը նույնպես շնորհակալություն է հայտնել ջերմ ընդունելության համար և խոսել այն ճանապարհի մասին, որը նրան հասցրել է այդ պաշտոնին: Ըստ Քութուջյանի նա աշխատել է որպես հանրային պաշտպան, այնուհետև՝ դատախազ: Նա նշել է, որ գնահատում է այն հանգամանքը, որ մարդիկ օգնում են միմյանց: Նրա խոսքով իր աշխատանքում հաճախ է հանդիպում դատապարտյալների հանդեպ բռնության դեպքերի, որոնց կանխման համար ջանք ու եռանդ չի խնայում: Նրա գործառույթների մեջ է մտնում նաև դատապարտյալներին մասնագիտությամբ ապահովելը կամ նրանց համար հարմար աշխատաք գտնելը:

Հանդիպման ընթացքում հայ փաստաբանները Փիթը Քութոջյանի հետ քննարկել են մասնագիտական բազմաթիվ հարցեր՝ հիմնականում խոսվել է հայ-ամերիկյան իրավական դաշտի հարաբերությունների մասին:

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



Առաջարկվող նորություններ

25.10.2013ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԳԻԼԴԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

06.11.2013 ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ ՆՇԱՆԱԿՎԵԼ Է ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

07.11.2013ԱՐԱ ՋՈՀՐԱԲՅԱՆԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿՄԵԿՆԻ ԱՐՑԱԽ

11.11.2013ԱՄՓՈՓՎԵԼ Է ԱՐԱ ՋՈՀՐԱԲՅԱՆԻ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂ ԿԱՏԱՐԱԾ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })